

Տեղեկանք

Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման

միջպետական ճանապարհի վերաբերյալ

Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի առաջին փուլով վերականգնվող հատվածի երկարությունը կազմում է 38.45 կմ, որը բաղկացած է 3 չափաբաժնից՝ 17.625կմ, 12.5կմ և 8.325կմ երկարությամբ: Հիմնանորոգման աշխատանքներն իրականացնող հիմնարկներն են «Արարատի» ՃՇՇ, «Ճանապարհ» ՍՊԸ և «Կապավոր» ՍՊԸ:

Այդ ճանապարհահատվածում գտնվող 12 կամուրջներից երեքը կքանդվեն՝ փոխարենը կկառուցվեն նորերը, ինը կամուրջներ կհիմնանորոգվեն: Ճանապարհի երեք թունելներում՝ իրականացվելու են վերակառուցման, բետոնապատման, ինչպես նաև հատակի իջեցման, մայթերի, անվտանգության խորշերի կառուցման, ճակատային մասերի վերակառուցման, բետոնե պատերի հիմքերի լրացման, ասֆալտապատման, ներքին հարդարման, լուսավորության, անվտանգության բազրիքների տեղադրման և այլ աշխատանքներ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական ներդրումային բանկի և Ասիական զարգացման բանկի կողմից համատեղ: Սռաջին փուլով նախատեսված հիմնանորոգման աշխատանքների արժեքը կազմում է 15մլրդ. դրամ: Մինչ օրս կատարված աշխատանքների համար վճարվել է մոտ 2.5մլրդ. դրամ:

Ներկայումս կատարվում են հողային, ճանապարհի լայնացման, հենապատերի կառուցման, եզրաքարերի տեղադրման, թունելների և կամուրջների վերակառուցման աշխատանքներ: Ծրագրի առաջին փուլով իրականացվող աշխատանքները նախատեսված է ավարտել 2018թ. վերջին:

Երկրորդ փուլով նախատեսվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 52.7 կմ, փաթեթը հավանության է արժանացել Ասիական զարգացման բանկի կողմից, ներկայումս կատարվում են մրցութային գործընթացի հետ կապված նախապատրաստական աշխատանքներ: